ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

08.10.2025թ.

ՈՐՈՇՈՒՄ 768-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24 կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին և 2.2-րդ մասերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի թիվ 12-Ն հրամանի 4, 8.1, 8.2, 8.3 և 8.4 կետերի պահանջները

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հաստատել համակարգչի միջոցով ընտրված ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար 2025 թվականի հոկտեմբերի 09-ին նշանակված մրցույթների մրցութային հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովի նիստերի տեխնիկական սպասարկումն իրականացնելու համար համայնքի ղեկավարի լիազորված անձ նշանակել համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Մարգարիտա Հարությունյանին:
3. Աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ԱՂԱՋԱՆՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 08
ք. Գորիս

Հավելված
Գորիս համայնքի ղեկավարի
2025թ. հոկտեմբերի08-ի թիվ 768-Ա որոշման

Անհատական կազմ
ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշտոնները մրցույթով զբաղեցնելու նպատակով մրցութային հանձնաժողովի

1) Հովակիմյան Արմինե - Գորիսի համայնքապետարանի աշխատակազմի հանրային կապերի, կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական հարցերի բաժնի պետ,
2) Ավետիսյան Արմեն - Գորիսի համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և հողօգտագործման բաժնի պետ,
3) Աղաջանյան Արտյոմ-ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու անդամ,
4) Արզումանյան Արթուր - ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ,
5) Բունիաթյան Էդիկ - ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ,
6) Գրիգորյան Մարինե - «ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի N 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ: